ստահակաց։ Եւ դաշինս եդեալ էին ընդ միմեանս, զի զկնի աւուրց ծոմապահութեան իւրեանց՝ կատարել, զոր միանգամ եդեալ էին 'ի մտի. բայց ոմանք 'ի նոցանէ դըրժեալ երդմանն՝ կալեալ զոմանս 'ի քրիստոնէից 'ի պատճառս վանօրէից՝ դան հարին զնոսա։

Ասի համարձակութիւն առեալ գիւղականաց Սելիմամոյ՝ յարձակեցան սրովք և քարամբք 'ի վերայ Հրէից, որք բարձեալ տանէին զմեռեալս իւրեանց 'ի Թաղել, և վիրաւորեցին զնոսա, և զմեռեալն ընկեցեալ 'ի դադաղէն՝ թաւալեցին 'ի ձորն, եւ բացեալ զգերեզմանս նոցին 'ի բաց յրուեցին զոսկերս մեռելոց։ Բնակիչք Բեթղեհէմի զհետ եղեն աւազակութեան. իսկ Ֆէլլահք Յովհաննու Ծննդեան կալեալ զերկուս ոմանս յայլազգեաց քաղաքին, տարեալ 'ի գիւղն եդին 'ի փուռն հացի. և ապա միաբանեալ ամենեցուն, որոց գլուխ եւ առաջնորդ էր Ապուզոչ Օթման, յարեան 'ի վերայ վանօրէից եւ խնդրէին 'ի նոցանէ գիր երաշխաւորութեան. զի 'ի դալստեան Կուսակալին մի պահանջել 'ի նոցանէ դրամս, այլ զտուրս նոցին հատուցեն վանականք։

Այլ զայս ամենայն չարիս յուզէին Եահեայ և Գասըմ հին քաղաքապետք որջացեալք յԵրուսաղէմ, ո՞ւր դիցուք զկապ եւ զկռիւս այլազգեաց ընդ երիս վանօրայս սակս Ջուխայի, և ընդ Հրէայս վասն շաքարի։ Յերեսաց այսպիսի անկարգութեանց եւ չիոթից՝ անկան միաբանք Հայոց 'ի ներքոյ տոկոսաւոր պարտուց իբր 1000 քսակս արծաթոյ։ Տաղնապեալ 'ի նեղութեանց ասի Թէոդորոս Պատրիարքի կամեցաւ փախչել 'ի Կիպրոս և անտի յայլ տեղի. այլ միաբանք արդելին զնա, գուշակելով զապագայ մեծամեծ չարիս. վասն որոյ առաքեցին զԳաբրիէլ վարդապետ մահսերական գրով 'ի Կոստանդինուպոլիս՝ զի Հայք, Յոյնք և Լատինք գումարեալ 'ի միում վայրի, խորհրդով դրեցին առ գլխաւորս ազգի իւրեանց, եւ առին գիր 'ի դատաւորէ քաղաքին ծածկապէս, եւ առաքեցին 'ի Թագաւորեալ քաղաքն. զի գլխաւորք երից ազգաց խորհեսցին անդ 'ի միասին հաճել զկամս Արքայի 'ի կարգել զոք Բդեշխ Երուսաղէմի երկու թուղով, բաժանելով 'ի Դամասկոսէ, զի բարեկարգեսցի երկիրն և սանձահարեսցին